

Դուրս դացած լրագրաց ծանրու
ծախքը խճագրութեան վրայ է։
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ եւ իոյն գորութիւն խճագրո
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պոլ
սիս, Չինիլի խան, Մատիսի գրասենե
կակը։
Նամակ ծախքը չգծարուած նա
խակ չընդունուիր։

ᐱ ᐱ ᐱ ᐱ ᐱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օրինաւորականք կը սնդկեն թէ ժողովը՝ կամ մանաւանդ իրենք, եօթնամայ իշխանութիւնը Մաք—Մահնդի անձին տուած են և ոչ Հանրապետութեան։ Եթէ, կըսեն, Մաք—Մահնդ մարալախաին երկու, երեք, չորս տարիէն վախճանի կամ Հրաժարի, եօթնամայ իշխանութիւնն ալ անոր հետ կը դադրի, և ուրիշ Հը կրնար անցնիլ ։ Ասկէջ դատ կը պնդեն թէ ազգային ժողովը Մաք—Մահնդ մարալախաին եօթնամայ իշխանութիւն տուած ժամանակ՝ Երկրին կառավարութեան ձեռ նոյն եօթըն տարուան միջոցին փոխելու և միապետութիւն հաստատուելու իշխանութիւնէն հրաժարած չէ։ Ընդհակառակն՝ ժողովին Օրինաւորական անդամներն այս պայմանով միայն հաւանութիւն և քուէ տուած են եղեր

Մահայն այս աղղը բնաւ աղղե-
ռութիւն չունեցաւ : Վիճաբանու-

ՎԵՐՋԻՆ, ԼՈՒՐԵՐ

Արնիմ կոմսը նամակ մը հրատարա-
ցայ որոյ մէջ ի նպատակ Տալլինիէ-ն կա-
նխկախն բռնած ընկալորը կարգարա-

»	Ролн.	43 3/4
»	1865	65 3/4
»	1869	53 3/8
»	1871	62 1/2
»	1872	71
»	Ролн.	93 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաղամի՝ օրն ալ դ-հոդաններն ալ-

յերուսալեմի մասին իշխանին է Պէ. Ե. Բ. Բ.

Կիրակի օրը Միլան իշխանն սպա-
րապետի դուռն երթալով, ի պա-
տիւ իրեն կատարուած զօրահանգէ-
սի մ'է զինուորական կրթութեան
փորձերուն ներկայ գտնուեցաւ, և ետ-
քէն ալ Բարձր. կայսրորդի Եռուսեփ
իզգէտին էֆէնտին նախագաւ մը
տուաւ իրեն:

Երեկ իրիկուն Բարձր. Մեծ Ե-
պարքոսը շքեղ կոշտնք մը տուաւ
իշխանին:

Այսօր ալ վեհ. Սուլթանին կողմէն
յերեկուան ճաշ մը պիտի տրուի ի
Չամլըճա: Իրիկունն ալ Ռուսիոյ դես-
պանը կոշտնք մը պիտի տայ:

Միլան իշխանին ուղեկիցներուն
մէջ հայազգի երիտասարդ պաշտո-
նատար մ'ալ կայ, Մեծ. Միլանի Պո-
լիտեխ. որ իշխանին առաջին թարգ-
մանն է և միանգամայն սիրելին:

Ուրբաթ օրը ծովակալութեան
մակցիկներէն մին, որոյ մէջ հարիւ-
րապետ մ'է ետքն նաւատի կային,
Գանլըճայի առջեւ տակին վերայ ե-
ղաւ հովին բռնութենէն, և նաւաս-
տիկներէն երեքը ծովակալը եղան:

Յորենին սրերուն պատճառաւ հա-
յադործներուն ծախսած հացին հո-
խան 105 փարայի և Սիմիոններուն
ծախսած հացին գինը 93 փարայի ե-
լաւ:

Բուժէրի այլ և այլ կողմերէն ե-
կած հեռագիրներ կը ծանուցանեն
թէ անցեալ շաբթու տեղացած անձ-
րեւները Բուժէրի ամեն կողմերն ալ
տեղացեր են, հետեւաբար յառաջի-
կայ հունձքերուն համար վախճուած
վաճառքը փարատեր է:

Յաւ. օր սրտի կրծանուցանէնք թէ
Մեղուի խմբադիր—Տնօրէն և աղ-
դային երեսփոխան Սրբաճեան Յա-
րութիւն էֆէնտին, որ քանի մը
ամէն ի վեր անկողնոյ կրծառայէր,
երեկ իրիկուն իւր մահկանացուն
կնքեց ի հասակի 43 ամաց:

ԴՐԱՄԱՆՆԵՐ

Օգոստոսի տեմին և ուրիշ բոլոր
արժեթղթոյ գիները շարած օրէն
ի վեր մէկէն ի մէկ բարձրանալ ըս-
կան և հարիւրին տասը վրայ գին
թէ՛ Եւրոպիոյ Պորտսերուն և թէ՛
Մայրաքաղաքի մէջ:

Եւրոպայէն եկած մասնաւոր տե-
ղեկութեանց նոյեմբ. այս նպատա-
ւոր վիճակին պատճառ կը համար-
ուի վրեժ: Ստալք փաշայի բանակ-
ցութեանց յաջող ելը մ'ունենալուն
հաւանականութիւնը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ		
ԷՍՅԱՄԱՐ ՌԵՍԻՊԵ		
22 ապրիլ	Երկուշաբթի իրիկուն	50, 28
23 »	Երեքշաբթի առաւօտ	—
Բացուեցաւ		—
Կէս օր		—
Կ. Պոլսի 22 ապրիլ		
Աօսիէի ժէնէրալի բաժինք	Անդ. լիբ.	6, 22
« Փոխանակութեան »		4 12
Կ. Պոլսոյ Պանքային »		4 28
Քրէտի ժէնէրալ »		8, 5
Քրէտի Օսթրո-Սերբ		4 50
Երկաթուղեայ հին	Յոր	409
» նոր		81
Փոխ. 1863	»	330
» 1865	»	333
» 1869	»	270
» 1872	»	74 1/5
Փոխ. 1873		
Թրաքիա	Օգոստ. լիբ	3, 55

ԸՆԴՈՒՅՐ ԴՐԱՄԱՆ	
22 ԱՊՐԻԼ	
Անգլ. փոս	109, 30
Կաթ. փոս	87 20
Կաթ. փոս	90
Քրէտի փոս	34, 20
Հինգի փոս	—
Հինգի փոս	404
Պոլսի	423

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՀՐԱՄԱՆ ԵՒ Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԵՐԵՎԱՆԻ

Մեծապատիւ երեսփոխան էֆէնտիք.

Աղդային Ընդհանուր Ժողովոյն
առաջիկայ նիստը պիտի դաւանի
Ապրիլ 26 ուրբաթ օր ի Ս. Լուսառ-
բէ Եկեղեցին Ղալաթիոյ:

Կը հրաւիրեմ զԱղդային երեսփո-
խան հրամայել ի նոյն օր իրենց Ե-
րեսփոխան պարտաւորութիւնը կա-
տարելու:

Ատենին ըստ սովորութեան պի-
տի բացուի ժամ 6ին և գոցուի 10ին:

Մնամ աղօթարար
Պատրիարքական Տեղապահ
20 ապրիլ 1874 ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ

1. Գուհարկութիւն Պատրիարքա-
կան ընտրութեան:

2. Ընտրութիւն Դիւանի Ընդհ. Ժո-
ղովոյ:

3. Վաւերացումն նախորդ ատե-
նագրութեանց:

Ատենագիր Ընդհ. Ժողովոյ
ՏԻԳՐԱՆ ԵՌԵՎԱՆԻ

ՕՐՈՒՄԸ ԽՆԴԻՐՈՅ

ՊԱՏՐԻԱՐԿ ԸՆԴՈՒՅՐ

Ապրիլ 19ին Ընդհ. Ժողովը խնդ-
րոյ կարգին մէջ նշանակեալ խնդ-
րէն ինչ որ օրինաւոր էր՝ ետքի
թողուց ինչ որ ստիպողական էր՝ ա-
նոր դիմեց:

Սահմանադրական երեսփոխան-
ներն իրենց պատրիարքին հրաժա-
րական գեղ. չընդունան, փութա-
ցան նոր Պատրիարք մ'ընտրելու ձեռ-
նարկել:

Նախորդ ատենագրութեանց ըն-
թերցումն ու վաւերացումն առիթ
պիտի տար քննելու զանցեալը, զոր
տխուր կանուանենք, որովհետեւ ա-
նոր մէջ իրաւունքներ և օրինաւո-
րութիւններ կան խեղդուած ու ապան-
նուած. զանոնք թողուլ և թաղելը՝
կը նշանակէ խեղդիչներն ու ապանիչ-
ները քաշալերել, ի՞նչ կերպով աւարտ
զապադայն, մի է որ անկեղծ արի-
ւութեամբ պիտի դիմէ այդ պաշտո-
նին, տեսնելով այնպիսի նախորդու-
թիւն մը, որուն ինչպէս գահուն՝
նոյնպէս և բաղդին պիտի յաջորդէ:

Փափաքելի է մեզ, ինչպէս նաեւ
ամեն բարեւեղ անձանց, որ խաղա-
ղութիւնը տիրէ աղգին մէջ. բայց
խաղաղութիւնը օրինաւորութեամբ
վարուելու և իրաւունք յարգելու հե-
տեանքն է, և ոչ թէ կամք ու կիրք
պաշտելու. անորդ յարձակումնե-
րով և ցած ընթացքներով խոցել
փախցնել աղգին պաշտօնեաները,
ինչպէս եղած է դժբաղդաբար շատ
անգամ: Եւ յետոյ ելնել խաղաղութիւն
քարոզել, խաղաղութիւն խնդրել.
մոռացութիւն պահանջել եղածնե-
րուն, ապշութիւն պահանջել ամեն
կերպ դարձուածներու համար, կեղծ
աղղաւորութիւն հագնել, անյիւր-
ցունքներ թափել աղգին վրայ, խա-
ղաղութիւն պէտք է ըսել, խաղա-
ղութեանց հեղինակ և դրօշակիր եղանե-
րուն կիրքն ու կամքն է. որովհետեւ
մի և նոյն անձինք այսօր խաղաղու-
թիւն կը գոչեն, բայց օր մը նորէն
խաղաղութիւնը պիտի հալածեն:

«Մի թէ քաղցի» ի վրայ խաղող
կամ ի տատակէ թուղ:

Սակայն Պատրիարքի ընտրութեան
խնդիրն ստիպողական եղաւ, և Ընդհ.
Ժողովը այս ուրբաթ օրն այդ խնդ-
րով պիտի զբաղի: Կըսեն թէ աղղը
անխնայութեան ձեռք մնացած է՝
առանց պատրիարքի. վարչութիւնն
անգործ մնացած է՝ առանց պատրի-
արքի. Բ. Դրան հրամանն անգոր-
ծաբերել մնացած է՝ առանց ընտ-
րութեան պատրիարքի: Բայց Սահ-

մանագրութիւնը, սահմանադրական
երեսփոխանք, սահմ. ժողովուրդն,
ասանք ինչ կըսեն. կարելի է դաշ-
նաւորել ասանք ստիպողականութեան
խնդրոյն հետ, և ամեն բան ետ ձը-
գել: Մի թէ այս կերպով Պատրիարք
մ'ընտրելը՝ սահմանադրական օրէնք-
ներէ և իրաւունքներէ հրաժարել,
անցեալ զեղծմանց վրայ զեղծում մ'
ալ բարդել և սպառնալիք վտանգա-
ւոր օրինակ մը թողուլ է:

Ես սովորութիւն չունիմ ուրիշ
աղղաց օրէնքներն ու քաղաքակա-
նութիւններն օրինակ բերել մեզի.
անոնք անհամեմատելի են մեր աղ-
գին հետ, սակայն բուն իսկ մեր ու-
նեցած օրինաց դիմելով, ըրածնիս
խիստ հեռու կը տեսնուի անոր ար-
քամագրութենէն: Ինչպէս կապե-
լու է 1873 օգոստ. 24ը՝ 1874 ապրիլ
26ին հետ, երբ նոր Պատրիարք ընտ-
րուի:

Եթէ սահմանադրական ենք,
Պատրիարք մ'ընտրելու կամ հըրա-
ժարեցնելու համար բնաւ հարկ չը-
կայ յուղուել, վասն զի Սահմանադր-
ութիւնն օրէնք է, և օրէնք մը պար-
զաբար կը գծէ իւրաքանչիւր պաշ-
տօնավարի գործոց և պարտոց սահ-
մանը և պաշտօնէ գաղաւթան պայ-
մանն ու պատճառները:

Սակայն, դժբաղդաբար, մեր աղ-
գայինք՝ որը դիտութեամբ, որը
անդիտութեամբ, Ա. տարուան փոր-
ձերէ և փորձանքներէ ետեւ, տա-
կաւին օրինաց ողիւն չ'ըմբռնեցին.
փոխանակ իրենց ձեռքն եղած օ-
րէնքը կատարելագործելու և զայն
իրենց ուղեցոյց ու կառավարող ը-
նելու, անհատներու և անձնուրու
գիր են. անձերէ կ'սպասեն այն ամեն
բան, ինչ որ անձը օրինաց մէջ տես-
նելով և օրէնքէն առնելով պիտի
տար մեզ: Աւելի պարզ բանք. Հա-
յոց համար Սահմանադրութիւն ե-
ղեր չէ եղեր, մեք ամեն բան Պատ-
րիարքէն կը սահմանենք. ժողովներ
ունենանք չունենանք, մեր ամեն
խնդիրներն ու գործքերը կը մնան,
եթէ Պատրիարք չունենանք: Ահա
մեր ժողովուրդն ու ժողովները տա-
կաւին այս վիճակին մէջ են, Գաւա-
ռացին ալ միևնոյնն է. մի միայն ա-
ռաջնորդ մ'ունենալ իրեն համար
ամեն բան ունենալ է, և առանց ա-
ռաջնորդի իր բոլոր ժողովներն իրեն
համար ոչինչ են:

Տիրող կառավարութիւնն ալ այդ-
պէս կը ճանչէ զմեզ, այսինքն իւր հը-
րամանները պատրիարքի և առաջնոր-
դի անունով կուղղէ մեզ, և աղղին
խնդիրներն ալ անոնց անունով կըն-
դունի, մի միայն զանոնք միջնորդ
ճանչելով, և այն միջնորդական պաշ-
տօնն ալ յատուկ հրովարտակով ու
արտօնութեամբ ինքն չնորձած է
հինգ հարիւր տարուէն ի վեր, և
կը չնորձէ նոյնպէս այսօր:

Երբ որ թէ՛ կառավարութիւնն եւ
թէ՛ ժողովուրդն այսպէս են, զար-
մանք չէ ուրեմն որ այսօր վարչու-
թիւնը և վարչութեան հետ երես-
փոխանութիւնն ալ Պատրիարք կու-
ղեն և ստիպողական կերպով կուղեն:

Ասկէ առաջ Պատրիարք մ'ունենիք,
Պատրիարքն օրէնքով չկառավարեր
ըսուեցաւ. հիմա Տեղապահ մ'ու-
նինք, օրէնքը տեղապահով չկառա-
վարելի կըսեն: Քիչ օրէն ուրախու-
թեամբ կը տեսնենք նոր Պատրիար-
քը. սակայն այս դրութենէն այնպէս
կը հետեւի թէ մեր օրէնքը՝ այն է
Սահմանադրութիւնը՝ Պատրիարքին
մը համար է միայն, և Պատրիարքին
մը հետքն է այդ օրէնքը գործադրել
կամ ոչ, նոյնպէս և աղղին գործերը
տեսնել կամ ոչ. հետեւաբար ժողով-

ներն ու երեսփոխանութիւնը եղեր
են կամ ոչ՝ միևնոյն բան է:

Երեսփոխան
Հայ երեց

Երեսփոխանական ժողովոյ ուրա-
բաթ առուր նստին մէջ շատեր ան-
սած են որ Զոյլիւնաց մտերիմ խոր-
հըրդական Ա. . . վարդապետը, ըը-
ւէտկութեան համար փոխանակ մէկ
ձեռք վեր վերցնելու, երկու ձեռ-
քը մէկէն վերցուցած է, որպէս զի
ձեռք մ'աւելի համարուի և մեծա-
մասնութիւն դոյնաւոր:

Ներկայ գտնուող ժողովրդեան
մէջէն շատեր այս դալթիկական ա-
պօրինութիւնը տեսնելով, բաղմատո-
րադիր նամակաւ բողոք մ'ուղղած են
մեզ ի հրատարակութիւն, բայց բա-
ւական երկար և միանգամայն խիստ
ըլլալուն համար արժան չէր տեսնելք
հրատարակել:

Վառն Էրոստ Կոնստն Զաւարդ
(Եր. Կ. Ե. 1522)

Մեք Պոզոս վարդապետին ի պա-
տիժ իւր աքսորն իբրեւ Բրիտանոս-
կան հեղութեամբ տանող վարդա-
պետի մը սրտին ապացոյց, նոյն աք-
սորման վայրէն դուրս նամակին մէկ
երկու պարբերութիւնն՝ կրօնական
ժողովոյ ուղղութեան կ'յանձնենք, որ
նոյն նամակին իբր խորագիր 20—
30ի չափ ողջախոհ և երեւելի անձանց
(1) անուններն թուելէն և նոյա կա-
մակից և համախոհներն ի մի առ-
նելով և մի քանի դէպքերու (2) ի-
բր իրեն գործակից յայտարարելով
(այն անձինքներէն շատերն մանկտի-
ներ էին այն անցից ժամանակ) եւ
կերպով մ'ալ երեսփոխանութեան
մեծամասնութիւնն ողջախոհ անձանց
ընտրութեամբ իր իշխանական փա-
ռախրութենէն յուսադրել յաւն ա-
կամոյ մերկանալով և իւր բաղմաճ-
եալ աղղին մատուցած ծառայութիւ-
նը յիշելով և զնոսա ապերախտ ան-
ուանելով՝ յետագայ անխնայ շանթե-
րէն և նոյնքներն կը թափէ:

Աստուած իմ մի՛ լուր, զի բե-
զրան մեղաւորն նեղաւորի և անի-
բաւի բացաւ ի վերայ իմ: Կործա-
նեցեցաւ զնոսա և ալ մի ևս չինեա-
ցին . . . Դիցեա զնոսա որպէս հը-
ւնոց ի հուր և այլն . . . Պատու նոյա
«Երկրի կործան», և զաւակ նոյա յոր-
գուց ի մարդկանէ: Աստուած կոր-
ծանեցեց զնոսա իսպառ. . . և այլն:
«Եղիցին սեղանք ձեր առաջի ձեր
«Երկրային և այլն . . . Արիցեա ի
«վերայ նոյա զարկութիւն քո և
«արտօնութիւն բարկութեան քո
«հառցէ նոյա Եղիցին բնակութիւնը
«նոյա աւերակը և ի յարկ նոյա
«մի ոք իցէ որ բնակիցէ. . . Դիւր
«տէր զմեզ ի վերայ մեղաց նոյա և
«այլն . . . Որդիք ձեր օրը, և կին
«ձեր այրի սահեցին փութութեանց և
«այլն: Ես ասանք ձեզ համար յիշանս
«պիտի կարգամ. . . Աստուած զձեզ
«և զամենայն շար կամակիցող ձեր
«ի զատու Բեյլիարայ՝ Յուդայի կայէ-
«նի՝ Աքարդարմանի՝ և Վաստիոյ
«դասեցէ. հուր սուր և սով Աստ-
«ւածային ձեր տուններէն ձեր զա-

(1) Սոյն անձինքներէն շատեր վա-
պարականցին իր բուժիչը կը մեծարէ,
անոնց յանձնելով երեսփոխանութեան
աթոռը, ուրեմն կը հետեւի որ աղղին եւ
Պ. վարդապետի շահերն միմեանց համա-
պատասխան չեն:

(2) Այս դէպքերն են՝ ժամանակաւ
Խրիմեան հայրիկի գէմ լարած մեքենայու-
թիւնները, զոր զորպարութիւնները,
և զայն հաղածելու ամբարիտ ձեռնար-
կութիւններն, որոց շատերուն ինքն զը-
լուս հանդիսացած է:
